ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից իրականացվող «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» ոլորտի գերազանցության կենտրոնի հիմնում և ապագա և ներկա ուսուցիչների կարողությունների զարգացում» դրամաշնորհային ծրագիր

Դրամաշնորհային պայմանագիր՝ **№ 5/23-CIF առ «14» հունիսի 2023թ.**

Առաջադրանքի անվանումը: **«ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱ, ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՈԼՈՐՏԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ և ԱՊԱԳԱ և ՆԵՐԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Հրավեր No. ՀՊՄՀ-ԱԽԸ-2024/1

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» ոլորտի գերազանցության կենտրոնի հիմնում և ապագա և ներկա ուսուցիչների կարողությունների զարգացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսում է դրամաշնորհային ծրագրի ֆինանսական միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Խորհրդատվական ծառայությունները («Ծառայություններ») ներառում են՝ «Բնագիտություն, Տեխնոլոգիա, Ճարտարագիտություն և Մաթեմատիկա» ոլորտի գերազանցության կենտրոնի հիմնում և ապագա և ներկա ուսուցիչների կարողությունների զարգացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կենտրոնի գործունեության հայեցակարգի եվ գործառնական կանոնակարգի մշակման խորհրդատվական ծառայության իրականացում:

Սույն առաջադրանքի մանրամասն տեխնիկական բնութագիրը կցված է հետաքրքրության հայտերի ներկայացման սույն հրավերին (Հավելված 1):

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հրավիրում է բոլոր իրավասու անհատ խորհրդատուներին («Խորհրդատուներ») ներկայացնելու իրենց հետաքրքրվածությունը վերոնշյալ խորհրդատվական ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկատվություն այն մասին, որ իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձառություն ծառայությունները մատուցելու համար: Կարճ ցուցակի չափանիշներն են.

1. Խորհրդատուի ընդհանուր որակավորումը

- Բարձրագույն կրթություն, գիտական աստիճանը/կոչումը կդիտվի առավելություն
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն, անգլերեն լեզվի լավ իմացություն

2. Խորհրդատուի ընդհանուր փորձառությունը

- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ բարձրագույն կրթության ոլորտում:
- ՀՀ-ում ԲՏՃՄ ուղղությամբ տարվող բարեփոխումների լավ իմացություն:
- Կրթական ծրագրերի, ռազմավարական պլանավորման կամ գիտահետազոտական ծրագրերի նախագծման, ղեկավարման փորձը կդիտվի որպես առավելություն:

3. Խորհրդատուի հատուկ փորձառությունը

- Հայեցակարգերի/կանոնակարգերի/ ռազմավարական պլանավորման/ կազմակերպչական կառուցվածքների մշակման/ կառավարման մոդելների նախագծման փորձ:
- Միջազգային կամ տեղական նմանատիպ կենտրոնների հիմնման, կառավարման, հայեցակարգերի, կանոնակարգերի մշակման, ինչպես նաև դրանց հետ համագործակցության փորձը կդիտվի որպես առավելություն:

Դիմող թեկնածուները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Անձը հաստատող փաստաթղթի կրկնօրինակ
- Ինքնակենսագրություն /CV/ Europass ֆորմատով
- Կրթությունը և որակավորումը հիմնավորող փաստաթղթեր

Հետաքրքված Խորհդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային Բանկի՝ Գնումների Կանոնակարգեր Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) վարկառուների համար թվագրված հունիս 2016, վերանայված նոյեմբեր 2017, օգոստոս 2018 և նոյեմբեր 2020 (այսուհետ կարգավորումներ) փաստաթղթի 3-րդ բաժնի 3.14, 3.16 և 3.17 պարագրաֆների վրա, որոնցով սահմանվում է Համաշխարհային Բանկի շահերի բախման վերաբերյալ քաղաքականությունը:

Խորհրդատուի ընտրությունը իրականացվելու է Գնումների Կանոնակարգերի՝ Անհատ Խորհրդատուի ընտրության մեթոդով /IC/:

Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ ստորև նշված հասցեով, աշխատանքային ժամերի ընթացքում՝ 09:00-18:00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր՝ ուղարկելով հետևյալ հասցեին (առձեռն, փոստով կամ էլ. Փոստով՝ gnumner@aspu.am հասցեին) մինչև 2024թ. նոյեմբերի 22-ը, տեղական ժամանակով՝ 17:00:

Դիմումի ձևը կցվում է ստորև:

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ»

Ռեկտոր՝ Սրբուհի Գևորգյան

ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 17

Հեռ. (+37410) 597000

E-mail: gnumner@aspu.am

Կայքի հասցե՝ https://www.aspu.am/

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ»

ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 17

Դիմող՝ _____

_____

_____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել

_____

_____

_____:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ _____ /_____/

«____» _____ 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱ, ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՈԼՈՐՏԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ և ԱՊԱԳԱ և ՆԵՐԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՏԵԽՆԻԿԱԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (ՏԱ)

«ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱ, ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՈԼՈՐՏԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ և ԱՊԱԳԱ և ՆԵՐԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության առաջնահերթություններից է ԲՏՃՄ կրթության ուսուցիչների համալրումը դպրոցներում և աշակերտների մասնագիտական հետաքրքրությունների խթանումը: ՀՊՄՀ-ն բարեփոխումներ է սկսել 2011թ. Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ համագործակցությամբ, իսկ 2017-ին մեկնարկեց «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում» ծրագիրը, որն արդյունավետություն գրանցեց կրթության ոլորտում՝ 21-րդ դարի կարիքներին համահունչ հմտություններով մասնագետներ պատրաստելու նպատակով:

«Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» գերազանցության կենտրոնի ստեղծման դրամաշնորհային ծրագիրը նպատակ ունի ՀՊՄՀ-ում ապահովել կրթական նորարարությունների համար հմտություններով հարուստ մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը՝ համահունչ ժամանակակից մարտահրավերներին STEM կրթության ոլորտում:

Գերազանցության կենտրոնի միջոցով ուսուցանվելու են ապագա մանկավարժներն ու գործող ուսուցիչները՝ զարգացնելով նրանց մեթոդական, հետազոտական և ստեղծագործական հմտությունները՝ նյութատեխնիկական վերազինմամբ հագեցած միջավայրում: Կստեղծվի նաև գիտական միջոցառումների սրահ, ինչպես նաև նախնական փորձառության լսարան:

ԲՏՃՄ գերազանցության կենտրոնը, օգտագործելով տեխնիկական հնարավորությունները,

կխթանի ուսանողների հետազոտական գործունեությունը՝ աջակցելով դպրոցներին նոր ուսումնական ռեսուրսներ ստեղծելու հարցում: Նույն կերպ գործող ուսուցիչները հնարավորություն կունենան փորձի փոխանակման և վերապատրաստման՝ ծանոթանալով ԲՏՃՄ ոլորտի նոր մեթոդներին:

II. ՆՊԱՏԱԿ

Ապահովել խորհրդատվական ծառայություններ «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» (STEM) ոլորտի գերազանցության կենտրոնի հիմնման և ապագա ու ներկա ուսուցիչների կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ մշակելու համար կենտրոնի գործունեության հայեցակարգը և գործառնական կանոնակարգը: Սա իրավական հենք կհանդիսանա կենտրոնի գործունեության համար՝ նպաստելով STEM կրթության առաջընթացին և ուսուցիչների մասնագիտական զարգացմանը Հայաստանում:

III. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

Խորհրդատուի աշխատանքների շրջանակը ներառում է (բայց չի սահմանափակում) հետևյալ հիմնական գործողությունները.

ՓՈՒԼ 1: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (1 ԱՄԻՍ)

Գործողություններ.

- Կազմակերպել հանդիպումներ ծրագրի ղեկավարի և շահառուների հետ՝ հստակեցնելու նպատակները և ակնկալիքները:
- Վերլուծել STEM կրթությանը և գերազանցության կենտրոններին առնչվող գործող քաղաքականությունները և ռազմավարական պլանները:
- Առաջարկել աշխատանքի իրականացման մանրամասն մեթոդաբանություն և աշխատանքային պլան:
- Իրականացնել համեմատական հենանշում (բենչմարկ) և SWOT վերլուծություն՝ բացահայտելու լավագույն փորձը՝ ուսումնասիրելով տեղական և միջազգային համանման գերազանցության կենտրոնների փորձառությունը, գնահատելով ներքին ուժեղ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները:
- Իրականացնել նաև կարիքների գնահատում՝ սահմանելով STEM կրթության և հետազոտական հնարավորությունների բացերը:

<u>1-ին փուլի հաշվետվություն</u>

Սկզբնական հաշվետվություն՝

- Մանրամասն մեթոդաբանություն և աշխատանքային պլան:
- Կապակցված փաստաթղթերի վերանայման նախնական արդյունքներ:

Իրավիճակային վերլուծության հաշվետվություն՝

- SWOT վերլուծության արդյունքներ:
- Համեմատական վերլուծության արդյունքներ:
- Կարիքների գնահատման արդյունքներ:

ՓՈՒԼ 2: ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ (2 ԱՄԻՍ)

Գործողություններ

1. Առաքելության և տեսլականի սահմանում

- Մշակել կենտրոնի առաքելությունը և տեսլականը, որոնք արտացոլում են կենտրոնի նպատակը և համահունչ են ազգային առաջնահերթություններին:

2. Ռազմավարական նպատակների սահմանում

- Սահմանել կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակները կենտրոնի գործունեության համար:

3. Կազմակերպչական կառուցվածքի ձևավորում

- Նախագծել և առաջարկել կենտրոնի կառավարման մոդելները, ներառյալ կազմը, դերերը և պատասխանատվությունները:
- Սահմանել կառավարման կառուցվածքները և հիմնական պաշտոնները:

3. Գործառնական գործընթացների մշակում

- Նկարագրել հիմնական ծրագրերն ու նախաձեռնությունները:
- Նկարագրել ծառայությունների մատուցման մոդելներն ու վարչական ընթացակարգերը:

4. Ծրագրերի մշակում

- Նկարագրել հիմնական ԲՏՃՄ գերազանցության կենտրոնի ծրագրերը, հետազոտական նախաձեռնությունները և կրթական առաջարկները:

<u>2-րդ փուլի հաշվետվություն</u>

- Գործառնական հայեցակարգ (փաստաթուղթ)

ՓՈՒԼ 3: ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ (1 ԱՄԻՍ)

Գործողություններ

1. Գերազանցության կենտրոնի գործունեության կանոնակարգի մշակում

- բացահայտել համապատասխան օրենքներն ու կանոնակարգերը:
- մշակել համապատասխանության պահանջներ և քաղաքականություններ:

2. Գործառնական քաղաքականությունների մշակում

- մշակել քաղաքականություններ մարդկային ռեսուրսների, ֆինանսական կառավարման, որակի ապահովման և մտավոր սեփականության իրավունքների համար:

3. Կայունության և ֆինանսավորման ռազմավարության ձևավորում

- Մշակել ֆինանսական կանխատեսումներ հաջորդ հինգ տարիների համար:
- Բացահայտել հնարավոր եկամուտների աղբյուրներ (դրամաշնորհներ, գործընկերություններ, ծառայություններ):
- Առաջարկել ծախսերի կառավարման և ներդրումային ռազմավարություններ:

<u>3 փուլի հաշվետվություն</u>

- Կենտրոնի գործունեության կանոնակարգերի համապարփակ հավաքածու, որը կապահովի կենտրոնի աշխատանքը իրավական և էթիկական չափանիշների շրջանակներում:
- կենտրոնի ֆինանսական պլանի նախագիծ, որը կապահովի միջնաժամկետ կենսունակություն:

ՓՈՒԼ 4: ԱՄՓՈՓՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ (1 ԱՄԻՍ)

Գործողություններ

Շահառուների խորհրդատվություն

- Կազմակերպել սեմինարներ, քննարկումներ, հարցումներ և հարցազրույցներ՝ հետադարձ կապ հավաքելու համար:
- Սահմանել հիմնական կատարման ցուցանիշներ (ՀԿՑ) կենտրոնի գործունեության գնահատման համար:
- Սահմանել հաշվետվական մեխանիզմներ և գնահատման գործիքներ:

<u>4-րդ փուլի հաշվետվություն</u>

- Վերջնականացված բոլոր փաստաթղթերը, հաշվետվությունները և առաջարկությունները:

IV. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Սույն ՏԱ-ում նշված առաջադրանքները պետք է կատարվեն հետևյալ փուլերով.

- Փուլ 1 - տևողությունը 1 ամիս:
- Փուլ 2 - տևողությունը 2 ամիս
- Փուլ 3 - տևողությունը 1 ամիս
- Փուլ 4 - տևողությունը 1 ամիս :

V. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Գերազանցության կենտրոնի գործառնական ամբողջական հայեցակարգ, որը նկարագրում է կենտրոնի աշխատանքը, ներառյալ առաքելությունը, տեսլականը, նպատակները և գործառնական բոլոր գործընթացները:
- Գերազանցության կենտրոնի գործունեության կանոնակարգ և **կայունության ռազմավարություն**, որը կապահովի իրավական համապատասխանություն և արդյունավետ կառավարում:
- Ցուցանիշներ կենտրոնի աշխատանքի և ազդեցության ժամանակի ընթացքում գնահատման համար:

VI. ԺԱՄԿԵՏՆԵՐ

Խորհրդատվական ծառայությունը կիրականացվի պայմանագրի կնքման օրվանից 5 ամիս տևողությամբ: